**Մարտին Վարդազարյան**



Դիրիժոր, դաշնակահար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր:

Ծնվել է 1938թ.:

1944-56թթ. սովորել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում:

1956-69թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրի և կոմպոզիցիայի բաժնում:

1961-63թթ. ղեկավարել է «Մոսկվա» կինոթատրոնի նվագախումբը:

1963-66թթ. հիմնել և ղեկավարել է մի շարք գեղարվեստական ինքնագործ խմբեր:

1966-72թթ. կազմավորել և ղեկավարել է Հայկական ռադիոյի և հեռուստատեսության էստրադային նվագախումբը:

1972-74թթ. եղել է Ստանիսլավսկու թատրոնի երաժշտական բաժնի վարիչ:

1974-90թթ.՝ Կոմպոզիտորների տան գեղարվեստական ղեկավար, <<Հայհամերգ>>-ի էստրադային բաժնի պետ:

1990թ. մինչ օրս Ռադիոյի էստրադային - սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորն է, խորհրդատուն, դաշնակահարը:

Հեղինակ է մի շարք սիմֆոնիկ, կամերային, երգչախմբային ստեղծագործությունների, ինչպես նաև՝ 150 ներկայացումների և 40 ֆիլմերի երաժշտությունների, այդ թվում՝ «Մենավոր ընկուզենի», «Կարոտ», «Բարև, ես եմ», «Սարոյան եղբայրներ», «Ապրեցե՛ք երկար», «Տեղն արևի տակ» և այլն: